Մաս առաջին

1. Եղբորս՝ Գևորգին, ես միշտ հիշում եմ անհուն բերկրանքով, որովհետև նա մեր տան գրեթե միակ անդամն էր, որ ազատ էր ջղայնությունից: 2. Ամեն մի բարկություն նա հավասարեցնում էր բացարձակ զրոյի: 3. Պատահում էր, որ մեկնումեկը լցվում էր նսեմ զայրույթով. աչքերն էին փայլատակում, բարձրանում էր որոտ, որը գալիս էր ոչ թե երկնքից, այլ սենյակի հատակից՝ դեպի առաստաղը: 4. Գործը հասնում էր Գևորգին. մի մեղմ ժպիտ, մի հյութալի կատակ, մի չվիրավորող հեգնություն, և նսեմ զայրույթը փոխվում էր վսեմ հանգստության: 5. Պատահում էր, որ աչքերի փայլատակումին հաջորդում էր դանակի փայլատակում. այդ երկու փայլակներին ընդառաջ էր գնում նա սրերից ավելի հզոր կատակով, և տիրում էր խորին խաղաղություն:

6. Այդ օրերից մինչև հիմա էլ ես հիանում եմ նրա հզոր ջղերով և եկել եմ այն վերջնական եզրակացության, որ մարդիկ հիանում են իրենց չունեցած հատկություններով:

Մաս երկրորդ

1. Գևորգը մեծ կրքեր չուներ: 2. Նրա ամենամեծ կիրքը չամիչն էր: 3. Նա սիրում էր չամիչ: 4. Չամիչը ուտելիք չէր նրա համար, այլ մի ուրիշ բան: 5. Սակավակեր, ընտրությամբ ուտող, բայց չամիչի հանդեպ տածում էր նա բոցավառ կիրք:

6. Չամիչը եզակի կապույտ թռչունն էր: 7. Նա չամիչի հետ փոխում էր ամեն ինչ. իր ունեցած ամենաթանկագին իրը կարող էր վտանգել, եթե մեկը նրան դյութեր չամիչով:

8. Երբ հիվանդ էր լինում, և նրան հարցնում էին՝ չամիչ կուզե՞ս, և ինքը պատասխանում էր՝ ո՛չ, հայրս անմիջապես կարգադրում էր վազել բժշկի հետևից:

9. Եվ չամիչով փորձում էին նրա առողջանալը:

10. - Ի՞նչ ես ուզում,- հարցնում էր մայրս:

11. Գևորգի սև աչքերը փայլում էին.

-Չամիչ եմ ուզում: